Մեծարգո Վեհափառ,

Տ. Տ. Ամենայն Հայոց կաթողիկոս

Գարեգին Բ

2001 թ. հունիսի 24-ին մեր խնդրանքով Դուք ընդունեցիք Մայր Աթոռի ճարտարապետ Արծրուն Գալիկյանին և ինձ: Ես հիշեցրի, որ Դուք ասել էիք, թե Երևանում Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուց բացի էլի կկառուցվեն եկեղեցիներ:

Հունիսի առաջին կեսին Երևանի ռադիոյով հաղորդվեց, որ քաղաքի Հարավ-արևմտյան թաղամասում սկսվում է կառուցվել զվարթնոցանման եկեղեցի, և որ կառուցման համար անհրաժեշտ ողջ գումարը հատկացնում է բարերար Լուիզ-Սիմոն Մանուկյանը:

Մեր այդ հանդիպման օրը խոսվեց Զվարթնոցի նախագծով եկեղեցու կառուցման հնարավորության մասին, մի բան, որ կաթողիկոս Վազգեն Ա-ի երազանքն ու պատգամն էր: Դուք ասացիք, որ այն կարող էր կառուցվել դրամ ունենալու դեպքում, իսկ այդ կարող է պարզվել սեպտեմբերյան տոնակատարությունների օրերին, որևէ բարերար գտնելու դեպքում:

Տաճարի կառուցման տեղը առաջարկվում էր քաղաքի հյուսիսակողմում՝ հարավ-հյուսիս առանցքի վերջավորությունում՝ Կոմիտասի պողոտայի վրա: Դուք միաժամանակ հիշեցիք, որ քաղաքի հյուսիսակողմում եկեղեցու կառուցում էր ձեռնարկվում: Իմ ստուգումներով պարզվեց, որ իրոք, Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Ռուբեն Ազատյանի նախագիծը կա և ինչ-որ որոշված տեղ արդեն կա:

Ինչպես տեսնում ենք, Զվարթնոցի հարցը մնում է անորոշ, առայժմ գումար չկա: Այս իրավիճակը մտորումների առիթ է դարձել և այդ մասին էլ գրում եմ այս նամակը, հանձնելով Ձեր ուշադրությանը:

Ճարտարապետ Բաղդիկ Արզումանյանն իր առաջարկած նախագծում անտեղի խորշում է Զվարթնոցի մայր մույթերից, գմբեթակիր այն սյուներից, որոնք դեռևս Գրիգոր Լուսավորիչի տեսիլքի իրագործումն են ինչպես Էջմիածնի մայր եկեղեցում,

այնպես էլ Զվարթնոցում: Հայկական կենտրոնագմբեթ եկեղեցիների մեծ մասում կառուցվածքի այդ ձևն է առկա: Այդ մույթերը տաճարում ներքին շքեղությունների կարևորներից են, ի հակադրություն բարձրի անիմաստ դատարկության:

Արդ, կոնկրետ Բ. Արզումանյանի մշակած նախագիծը Զվարթնոց չէ, սակայն փորձ է այն ներկայացնել որպես Զվարթնոցի կատարելագործումը, որի կառուցման դեպքում անառարկայական կդառնա Զվարթնոցի երբևէ կառուցումը: Այո, այն հիմքում բոլորակ է, Զվարթնոցի ձևով եռաստիճան և, հեղինակի կարծիքով, «առավել» է նրանից իր ներքին անսյուն տարածությամբ:

Ես, որպես հայ մարդ, հայ ճարտարապետ, ինձ միշտ էլ պատասխանատու եմ համարել նաև ուրիշի գործի համար: Ընդհանրապես հարկ է կառուցել միայն լավը: Տվյալ դեպքում այդ եկեղեցին կապվելու է ծախքերը հոգացողի անձնավորության անվան հետ և, թերևս, նաև Ձեր անվան հետ, քանի որ այդ արվում է Ձեր հովանավարությամբ:

Արդ, որքանով է ամեն ինչը «տեղը տեղին» և արդյո՞ք այդ նախագիծը ի վիճակի է բավարարելու, արդարացնելու բարձր պատվիրատուների սպասելիքները և հույսերը: Ասում են, նախագիծը նայվել, հաստատվել է: Այդ ինձ ոչինչ չի ասում. այդպիսի չարդարացված դեպքերը եզակի չեն:

Ճարտարապետ Բաղդիկ Արզումանյանի նախագծում՝

ա. հատակագիծը հայկական եկեղեցու հատակաձև չունի, այն բոլորովին էլ Անիի Փրկչի եկեղեցու հատակագծի տարբերակ չէ, տարբեր են ըստ էության,

բ. այդ նախագծով եկեղեցու ծավալատարածական հորինվածքը չի բխում հատակագծի տրամաբանությունից, այսինքն հատակագիծը չի հուշում, որ շինությունը պետք է լինի եռաստիճան,

գ. այդ նախագծում կտրվածքը և հատակագիծը միմյանցով չեն պայմանավորված,

դ. այդ նախագծով գմբեթային մասը չունի սեփական հենարան՝ տեկտոնիկ չէ,

ե. այդ նախագծով գմբեթաթմբուկը անմասշտաբ է ստորին ծավալների համեմատ,

զ. գմբեթաթմբուկի արտաքին պլաստիկ մշակումը հարմոնիկ-ներդաշնակ չէ շինության մնացած մասերի հետ:

Ողջ վերոհիշյալը մեզ հիմք է տալիս համարձակորեն պնդել, որ այդ նախագծով շենքը կորակվի որպես տիպիկ էկլեկտիկ ստեղծագործություն:

Այդ նախագծով կառուցված շինության լրջությունը կլինի պակասավոր, մինչ կյանքը, հավատացյալները, մասնագետները, առավել ևս պատվիրատուները սպասում են անթերի արդյունք:

Այսպիսով եզրակացվում է, որ այդ նախագծով շենք, առավել ևս հայկական եկեղեցի կառուցելը մեղք գործել է նշանակում:

Միաժամանակ կարելի է հնարավոր համարել Լուիզ Սիմոն Մանուկյանի ներդրած միջոցներով առավել հարմար տեղում (թեկուզև նույն տեղում) կառուցել եկեղեցի Զվարթնոցի նախագծով՝ Թ. Թորամանյանի վերակազմությամբ:

Այսպիսի քայլը պատիվ կբերի, կփառաբանի պատվիրատուին, հովանավորողին և կառուցողին: Այս կհամարվի մեծագործություն, սրանով կմեծարեն VII և XXI դարերի հայրենասեր, տաղանդավոր, ստեղծագործող սերունդները:

Մեծարքգո Վեհափառ Տեր, ներողամիտ եղեք համարձակությանս համար:

Ձեզ մաղթում եմ քաջություն շինարարական գործերը վարելու արժանավայել մակարդակով:

Տիրան Մարության

Հայաստանի վաստակավոր շինարար-ճարտարապետ

ճարտարապետության դոկտոր

20.07.2001 թ

Երևան 9, Մոսկովյան 8, բն. 33

հեռ. 56-08-33